



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHÉGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ՀՈՎՈՒՎԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱԽԱՐՏԵԼՈՎ՝ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԿՆԵՑԱՒ ԼՈՍ ԱՆՁԵԼԸՆԵՆ



Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Երեքշաբթի, 25 Հոկտեմբերի Երեկոյեան մեկնեցաւ Լոս Անձելըսէն, աւարտելէ Ետք Արեւմտեան մեր Թեմին շնորհած իր հովուապետական այցելութիւնը:

Վեհափառ Հայրապետին այցելութեան պաշտօնական բաժինը վերջ գտած էր Կիրակի, 23 Հոկտեմբերին: Երեքշաբթի

Երեկոյ, Նորին Ս. Օծութեան ողջերթ մաղթելու համար օդակայան կր գտնուեին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, հոգեւորականաց դասու անդամներ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան ու Թեմիս Ազգ. Վարչութեան անդամներ եւ Ներկայացուցչական այլ դեմքեր:

Հովուապետական 20օրեայ այցելութիւնը Եղաւ կատարեալ յաջողութիւն, ինչպէս նաեւ մեր Թեմի պատմութեան մէջ արձանագրեց յիշատակելի էջեր: «Հաւատքով կը կերտենք» Նշանաբանով տեղի ունեցած այցելութեան ընթացքին, Վեհափառ Հայրապետը Եղաւ մեր ժողովուրդին ու մեր կրթական հաստատութեանց հետ, Լոս Անձելըսի, Ֆրեզոնյի, Լաս Վեկասի եւ Սան Ֆրանսիսքոյի մէջ: Այցելութեան հիմնական նպատակներն էին վերանորոգում հոգեւոր կեանքի, վերակենսաւորում Հայ Դպրոցի դերին ու նոր մղում՝ Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն: Այս իմաստով Նորին Ս. Օծութեան պատգամները երահստագիտութեամբ ընկալուեցան մեր Թեմի ժողովականութեան ու հաւատացեալ ժողովուրդին կողմէ՝ ընդհանրապէս, եւ պիտի կենսաւորեն յառաջիկայ աշխատանքի դաշտերը:

Բարի Երթ՝ Վեհափառ Հայրապետին:

HIS HOLINESS CATHOLICOS ARAM I RETURNS TO ANTELIAS AS PONTIFICAL VISIT TO THE WESTERN PRELACY CONCLUDES



On the evening of Tuesday, October 25, 2011, His Holiness Catholicos Aram I departed from Los Angeles as the conclusion of the Pontifical Visit to the Western Prelacy.

The Pontifical Visit of His Holiness officially concluded on Sunday, October 23rd.

On Tuesday evening, H.E. Archbishop Moushegh

Mardirossian, Prelate, Clergy, Central Executive and Executive Council members, and Pontifical Committee members gathered at Los Angeles International Airport to bid farewell to His Holiness.

The twenty-day Pontifical Visit entitled "With Faith We Build", will be recorded in the annals of Prelacy history as historic and memorable. The main themes of the Pontifical Visit were spiritual renewal, furthering anchoring and continued progress of Armenian Schools, and reassertion of our spirit of national aspirations. Our faithful in the Los Angeles area, Fresno, Las Vegas, and San Francisco were inspired and encouraged by the message of His Holiness on these themes, and the guiding messages of His Holiness will lead us in our future endeavors.

We wish a safe return to His Holiness.